ել են Մխիթարեանները երկու հարիւր տարեան անընդհատ խուզարկութիւններով գրադարանների մէջ, որոնք վանքերում մնում ել, խնամուել եւ ամբողջ ոյժով նուիրուել են մեր նախնեաց գործերի ուսումնասիրութեամբ: Մխիթարեանները ոչ միայն հնից մնացած գրականութիւնը քննութիւնների բովից անցկացրին եւ զտեցին, այլ Եւրոպական գրականութեան մէջ մեր երկրի, լեզուի, գրականութեան, պատմութեան, ցեղագրութեան, պեղումներից դուրս բերուածների մասին յայտնագործուած ամէն մի գործ թարգմանեցին եւ ժողովրդականացրին: Սորանից աւելին չէին կարող անել, քանի որ նիւթապէս կաշկանդուած էին եւ տիրող պետութիւններից արգիլուած: Ալիշանը 70 տարի Հայաստան երգեց եւ առանց Հայաստանը տեսնելու, այցելելու՝ գերեզման իջաւ: Այտնեանը Հայ գեղջուկի գաւառական բարբառները եւ նրանց կազմն ու փոփոխութիւնները վերլուծեց, առանց Հայաստանի օդը շնչելու եւ ջուրը խմելու:

Նկատի ունենալով որ այժմ հին Հայաստանի գաւառների յիշատակարաններից մնացորդները ի սպառ կործանուում են, կենդանի Հայաստանը ի սպառ ջնջելուց յետոյ, պատմական յիշատակարանների ջնջումն է կատարուում, Լէնդ-Թիմուրի, Լալա եւ Օսման-Ֆէյդի փաշաների կիսատ թողածները մեծ քաջագործութեամբ լրաց-